5ЭР6

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 140 - 25

Նախաձեռնող՝ ***«ԵՌԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ***
Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Պ. Սևակ 1փ. 25

Գործունեությունը՝ ***Խոյ համայնքի Գեղակերտ բնակավայրում դպրոցի կառուցում***
Արմավիրի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 140 - 25

«19» մայիսի 2025թ.

Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԵՌԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Գեղակերտ բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ բնակավայրում:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս Ըստ նախագծի՝ նախատեսվում է կառուցել 432 տեղ/հզորությամբ դպրոց, բացօթյա մարզադաշտ, վազքուղի, կաթսայատուն:

Նախատեսվող գործունեության տարածքում առկա են մի քանի կիսաքանդ շինություններ՝ ընդհանուր 2195.7 քմ մակերեսով, ինչը նախատեսվում է քանդել: Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ մոտ 2035 մ^3 շինարարական աղբի տեսքով: Քանդման արդյունքում առաջացող թափոնները, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Համաձայն էսքիզային նախագծի՝ դպրոցը երկհարկանի է:

Առաջին հարկի մակերեսը կազմում է մոտ 3200 մ^2: Հարկում տեղակայված են դասասենյակներ, գրադարան, համակարգչային, մեթոդ միավորման, տեխնոլոգիայի, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների դասասենյակներ, ուսուցչանոց, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն, իրենց ընդունարանով, բժշկի սենյակը, սպորտդահլիճ՝ իրեն կից հանդերձարաններով և մարզերի սենյակով, ճաշարանը և

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

խոհանոցը, 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ, ինչպես նաև սանհանգույց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված վերելակ, ծնողների սպասասրահ, նկուղային հարկ, որի ընդհանուր մակերեսը կազմում է 572 մ²:

Երկրորդ հարկի մակերեսը կազմում է մոտ 2560 մ²: Հարկում տեղակայված են 2 լեզվի, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների, մեթոդ միավորման, ռազմագիտության դասասենյակներ, ուսուցչանոց, ռեսուրսային կենտրոնը, կենսաբանության, ֆիզիկայի և քիմիայի մասնագիտացված դասասենյակներ իրենց կից լաբորատորիաներով, հանդիսությունների դահլիճ, 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Ընդհանուր առմամբ առկա են լինելու 26 դասասենյակներ:

Դասասենյակներն ունեն 7 մ x 7 մ առանցքային չափեր, միջին մակերեսը կազմում է 48 մ²: Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3.3 մ: Երկրորդ հարկի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ:

Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 7.8 մ, հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 4.5 մ:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել բազալտե երեսպատման սալիկներով և տրավերտինով: Պատուհանները լինելու են ալյումինե, երկշերտ: Աստիճանները՝ երեսպատվելու են բազալտե սալիկներով, հատակը մետլախային խեցեսալիկներով և վինիլներով: Բետոնյա շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Դպրոցի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- հողատարածքի մակերեսը՝ 2.0989 հա,
- կառուցապատման մակերես՝ 4724 մ², որից դպրոցի մակերես 3502 մ²,
- կանաչապատում՝ 14976 մ²,
- բաց մարզադաշտի մակերեսը՝ 810 մ²,
- բաց մարզահրապարակի մակերեսը՝ 479 մ².

Դպրոցի շենքի ջերմամատակարարումը նախատեսված է կաթսայատնից տաք ջրամատակարարման և ջեռուցման միջոցով: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պողպատյա խողովակներով՝ ավազե հիմքով, անշարժ հենարաններով:

Դպրոցի շենքում նախատեսված են օդափոխության և հրդեհամարման համակարգեր:

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս հեռանում է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցին է միանում կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ:

Դպրոցի մասնաշենքերը կառուցելուց հետո տարածքը ցանկապատվելու է 1,80 մ բարձրությամբ ճաղաշարով՝ 10 սմ բետոնե հիմքի վրա:

Գեղակերտի դպրոցի տանիքում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ՝ 127.6 կՎտ պիկային հզորությամբ:

Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքի ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Բանվորական և ինժեներատեխնիկական անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինարարական հրապարակում տեղադրվելու են ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինարարական աշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ /նախատեսվում է նաև տնկել 30 ծառ/: Բարեկարգումը կատարվելու է սալիկներով, սալվածքների, թեքահարթակներ, եզրաքարերի տեղադրմամբ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
-կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատվելու է,
-շինությունները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականցվելու է փակ ծածկով մեքենաներով,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում,
- շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական աշխատանքներում նախատեսվում է ներգրավել աղմուկի առաջացման ժամանակ ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- բոլոր մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով,
- կենցաղային և շինարարական աղբը տեղափոխվելու է հատուկ հատկացված վայր, համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով:
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
-քանդման ընթացքում առաջացած շինարարական թափոնները տեղափոխվելու են, համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ հատուկ հատկացված վայր պայմանագրային հիմունքներով,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ.
-փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի շինարարական հրապարակի պարբերաբար ջրցանում՝ օդի դրական ջերմաստիճանի դեպքում,
-կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ գործունեության սկզբում,
-արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգություն մշտադիտարկումներ՝ պարբերաբար ամենօրյա ռեժիմով,
-աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ պարբերաբար,
Բնապահպանական միջոցառումների համար ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվում է հատկացնել 500 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ բնակավայրում դպրոցի կառուցման վերաբերյալ իրականացվել է հանրային լսում Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ բնակավայրում, որի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արմավիրի մարզպետարանը և Խոյի համայնքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Խոյի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
6. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
7. Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով: Ապամոնտաժվող շինարարական թափոնների տեղափոխումն իրականացնել Խոյի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
8. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԵՌԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ բնակավայրի դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան